



ԼՈՒՅՍ ԶԻՄՆԱԴՐԱՄ. ԿՐԹԱԿԱՆ
ՀՀ, Երևան 0010,
Մելիք-Աղամյան 2/2
+374 60 707 700
donate@luys.am
luys.am/donate

**Պատասխան «Հետք» թերթի լրագրող
Քրիստինե Աղալարյանի
գրավոր հարցմանը**

Հարգելի՛ Քրիստինե, շնորհակալություն ենք հայտնում «Լույս» հիմնադրամի հանդեպ ցուցաբերած հետաքրքրության համար:

Հիմնադրամի գործունեությունը բխում է իր կողմից հռչակված առաքելությունից և տեսլականից, իսկ հաշվետվությունները լիովին համապատասխանում են ՀՀ օրենսդրության պահանջներին և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին, ինչն էլ պարբերաբար հաստատել են Հիմնադրամի ֆինանսական գործունեությունը աուդիտի ենթարկած այնպիսի հեղինակավոր ընկերություններ, ինչպիսիք են «Դելոյթ Արմենիա»-ն և «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա»-ն (KPMG):

Հիմնադրամին նվիրաբերված գումարները ծախսվում են բացառապես Հիմնադրամի առաքելությունից բխող նպատակների վրա՝ մշակութային, գիտական, կրթական ոլորտներում անհատներին ու կազմակերպություններին տրամադրվող ֆինանսական աջակցության ծրագրերի միջոցով: Հատուկ կցանկանայի ընդգծել, որ այս տարիների ընթացքում աշխարհի առաջատար 10 բուհերում մենք ունեցել ենք շուրջ 570 հայազգի կրթաթոշակառուներ գրեթե բոլոր գիտական ճյուղերում, ինչը մեր Հիմնադրամի հատուկ հպարտությունն է:

Հիմնադրամի գործունեությունը բավականին ընդգրկուն է: Մասնավորապես, 2017 թ. իրականացված շուրջ 1,6 մլրդ դրամի ծախսերի գերակշիռ մասը ուղղվել է՝ ա/ «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» բարեգործական հասարակական կազմակերպությանը Երևանում վերականգնողական կենտրոնի համար սարքավորումների ձեռք բերմանը, բ/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարություն - 2016 թվականի Ապրիլյան քառօրյա պատերազմից տուժած զինվորական ծառայողներին և խաղաղ բնակիչներին դրամական օգնություն ցուցաբերելու նպատակով, գ/ ՀՀ Տավուշի մարզի Այգեպար համայնք - աջակցություն բեկորային հարվածներից վնասված տանիքների հիմնավերանորոգմանը և նմանատիպ այլ ծրագրերի: Իրականացվել է նաև աջակցություն մշակութային ոլորտի ծրագրերին, ինչպես օրինակ՝ ա/ ՀՀ Շիրակի մարզի, Գյումրի համայնքի «Մանկապատանեկան արվեստի պալատ» ՀՈԱԿ-ին աջակցություն երաժշտական գործիքներ ձեռք բերելուն, բ/ «Երիտասարդական պալատ» ՀՈԱԿ-ին-աջակցություն երաժշտական գործիքներ ձեռք բերելուն: Նշված ծրագրերը կազմել են Ձեր նշած հոդվածի շուրջ 95%-ը: Նախորդ տարիներին նույն հոդվածում ընդգրկված ծախսերը նույնպես ուղղվել են նմանատիպ ծրագրերի ֆինանսավորմանը:

Վստահ եմ, որ Հիմնադրամի նվիրատուները բավարարված են մեր կողմից իրականացվող ծրագրերի բովանդակությամբ և արդյունավետությամբ, ինչի մասին լավագույն վկայությունը նրանց շարունակական աջակցությունն է:

Հարգանքով՝

Վարդան Մարկոսյան

«Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն